ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» դեկտեմբերի 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 56-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 28-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի N 594-Լ հրամանով հաստատված հավելվածի 18-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 26-ի «Գիտության կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2009 թվականի հունվարի 16-ի N 05-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 28-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածի՝

1) ամբողջ տեքստում «աշխատակազմ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Կոմիտե» բառերով.

2) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում՝ ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակացույցին համապատասխան: Արձակուրդի տրամադրման ժամանակացույցում ներառելու նպատակով՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն իրենց ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների հետ համաձայնեցված ժամանակացույցերը գլխավոր քարտուղարին են ներկայացնում մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը: Ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակացույցում ներառվում են նաև նախորդ տարվա տեղափոխված արձակուրդի օրերը:».

3) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Քաղաքացիական ծառայողներին և սպասարկում իրականացնող անձանց արձակուրդի տրամադրումը, տեղափոխումը կամ արձակուրդից հետ կանչելը իրականացվում է գլխավոր քարտուղարի անհատական իրավական ակտով, իսկ Կոմիտեի նախագահի տեղակալի և գլխավոր քարտուղարի արձակուրդի տրամադրումը, տեղափոխումը կամ հետ կանչելը՝ Կոմիտեի նախագահի անհատական իրավական ակտով:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ